ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 63-Ա

<<28>> սեպտեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՖԵԼԻՔՍ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 4-րդ և 16--րդ կետի 2-րդ ենթակետի, 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով 2023 թվականի հունիսի 26-ին Անի համայնքի Մարալիկ քաղաքում անցկացված հանրային լսումների արդյունքները և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը /Ծածկագիր՝ 080036RFPCH4/.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ձերժինսկի փողոցը>> վերանվանել հայազգի ռազմական գործիչ, Հայաստանի զինված ուժերի գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի մասնակից, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախկին փոխնախարար, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս, արմատներով Անի համայնքի Նորշեն գյուղից /նախկինում Խարկով/՝ Արկադի Տեր Թադևոսյանի անվամբ՝ **<<Արկադի Տեր-Թադևոսյան փողոց>>**:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 23-ի <<Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ֆելիքս Ձերժինսկու անվան փողոցը անվանափոխելու մասին>> N 43-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<28>> սեպտեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ